

ԱՐԱԿԱՆԻ ԽՍՀ  
ՀԱՅԺՈՂՎԱՐՄԱՏ  
ՄԵԾԱՐԱՍԱԿՆԵՐԻ ՈՒԽՈՒՑԱԿ  
ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ



# ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ



891.995  
P-95

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿ ՁՈՒԹՅՈՒԹՅՈՒՆ  
ՏԵՐԵՎԱՆ

1987

30 MAY 2011

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍՖՈՂԿՈՄԱՏ  
ՄԵԺԱՀԱՍՏԱՆԵՐԻ ՌԻԽՈՒՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

891.995  
Բ-95

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

## ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ

1937

## ՍՈՒՏԱՍԱՆԸ

Լինում ե, չի լինում մի թագավոր։ Ես թագավորն  
իր յերկրումը հայտնում ե.

«Ով ենպես սուտ ասի, վոր յես ասեմ՝ սուտ ե, —իմ  
թագավորության կեսը կտամ նրան»։

Գալիս ե մի հոգիվ։ Ասում ե.

— Թագավորն ապրած կենա, իմ հերը մի դադա-  
նակ ուներ, վոր եստեղից մեկնում եր, յերկնքում  
աստղերը խառնում։

— Կպատահի՛, — պատասխանում ե թագավորը։ —  
Իմ պապն ել մի չիբուխ ուներ, մի ծերը բերանին եր  
դնում, մյուս ծերը մեկնում, արեգակիցը վառում։

Ստախոսը գլուխը քորելով դուրս ե գնում։

Գալիս ե մի դերձակ։ Ասում ե.

— Ներողություն, թագավոր, յես վազ պիտի  
տայի, ուշացա։ Յերեկ շատ անձրե յեկավ, կայծակնե-  
րը տրաքեցին, յերկինքը պատռվեց, գնացել եյի կար-  
կատելու։

— Հա՛, լավ ես արել, — ասում ե թագավորը, —  
բայց լավ չեյիր կարկատել. ես առավոտ մի քիչ անձրե  
թափվեց։

Սա ել ե դուրս գնում։

Ներս ե մտնում մի աղքատ գյուղացի, կոտը կոնա-  
տակին։

— Դո՞ւ ինչ ես ուզում, ա՛յ մարդ, — հարցնում ե  
թագավորը։

— Ինձ մի կոտ վոսկի յես պարտ, յեկել են  
նեմ։



36583-62

— Մի կոտ վոսկի<sup>օ</sup>, — զարմանում ե թագավորը: — Սուտ ես ասում, — յես քեզ վոսկի չեմ պարտ:

— Թե վոր սուտ եմ ասում, թագավորությանդ կեսը տուր:

— Զե՛, չե՛, ճշմարիտ ես ասում, — խոսքը փոխում ե թագավորը:

— Ճշմարիտ եմ ասում, մի կոտ վոսկին տուր:

## ՍՈՒՏԻԿԱՎՈՐԱԿԱՆԸ

Հորս կնունքով, մորս ծնունդով, վեր կացանք միուր հինդ ու վեց հոգով, թրով-թվանքով վորսի գնացինք: Հաղին եր, Հյուղին եր, Զատին եր, Մատին եր, հերս եր, յես եյի, գնացինք վորսի...

Սարեր, ձորեր դուզ գնացինք, վորտեղ վորս կար՝ սուռ ու փուռ գնացինք, վորտեղ ահ եր՝ կուզ ու կուզ գնացինք...

Գնացինք, գնացինք, շատ թե քիչ, մին ել տեսնենք յերեք լիճ. յերկուսը ցամաք, մընի մեջ ել իսկի ջուր չկա: Մին ել, ըհը, մտիկ տանք, վոր ես անջուր լճում լողում են ճչում յերեք հատ սպիտակ բաղ, յերկուսը սատկած են, մինն ել կենդանի չի:

— Հյուղի՛, տո՛ւր հա, տո՛ւր:

— Թե՛ թվանք չունեմ:

— Հաղի՛, տո՛ւր հա, տո՛ւր:

— Յես ել չունեմ:

— Զատի<sup>օ</sup>... Մատի<sup>օ</sup>...

— Մենք ել չունենք,

— Բա ի՞նչ անենք...

Հորս ձեռին կարճ ու յերկար, հաստ ու բարակ մի վետ կար. հերս առավ նշան զրեց, մին ել՝ տրա՛ք, վոր կրակեց... նա կրակեց, յես զարկեցի. վոր զարկեցի՝ փովեց եսպես-ամեն թեր հինգ գազ ու կես...

— Հաղի՛, դանա՛կ...

— Թե՛ դանակ չունեմ,

— Հյուղի՛, դու...

— Յես ել չունեմ:

— Զատի<sup>օ</sup>... Մատի<sup>օ</sup>...

— Մենք ել չունենք:

— Բա ի՞նչ անենք...

Հերս ել ունի, բերան չունի:

Ես անբերան դանակը քաշեցինք: Հաղին մորթեց, չկարաց. Հյուղին մորթեց, չկարաց. Զատին չկարաց, Մատին չկարաց, հերս ել չկարաց, յե՛ս քաշեցի մորթեցի:

Մորթեցի, վեր գցեցի. բաղ-մի ասիլ մի գոմեշ ասա: Հաղին շալակեց, չկարաց, Հյուղին շալակեց, չկարաց, Զատին չկարաց, Մատին չկարաց, հերս ել չկարաց, յես շալակեցի: Շալակեցի, գնացինք:

Գնացինք, գնացինք, հասանք մի տեղ, մին ել տեսնենք յերեք գեղ, յերկուսի տեղն իսկի չի յերեռում, մընումն ել իսկի շենլիկ չկա: Ես անշեն գեղում դես ման յեկանք, դեն ման յեկանք, մի տուն գըտանք, մեջը յերեք պառավ, յերկուսը մեռած, մընի բերնումն ել չունչ չկա:

— Տղերք, ասինք, յեկեք բաղով վիլավ անենք: Ես անշունչ պառավը գնաց դես ման յեկավ, դեն ման յեկավ, կես բրինձ գտավ, յերեք պղինձ, յերկուսը ծակ, մին ել իսկի տակ չունի:

Զուրը լցրինք ես անտակ պղինձը, մեջը ածինք բաղն ու բրինձը, անկրակ յեփեցինք: Յեփեց, յեփեց, ժիմն ու բրինձը գնացին, մնաց զուրը:

Վորսից յեկած սոված մարդիկ, վրա յեկանք, կերա՛նք, կերա՛նք. վոչ աչքներս բան տեսավ, վոչ բերաններս բան մտավ:

## ԱՆԲԱՆ ՀՈՒՇԻՆ

Լինում ե չի լինում մի կնիկ: Ես կնիկը մի աղջիկ ե ունենում՝ անունը Հուռի: Մի ծույլ, անշնորհք աղջիկ: Որը մինչև իրիկուն պարապ-սարապ նստած:

Բանն ինչ կանեմ՝ կեղտոտ ե,  
Բամբակը կորիզոտ ե:  
Մաստակ պիտի, վոր ծամեմ,  
Կըտերը տիտիկ անեմ,  
Անցնողին մտիկ անեմ.  
Ուտեմ, խմեմ,  
Մըթնի, քլնեմ:

Հարեվաններն անունը դնում են Անբան Հուռի:  
Ինչ մերն ե՝ աղջկանը գովելով ման ե գալի.՝ լիդը  
գզող, լիդը մանող, համ խճճող, համ խճումը հա-  
նող, ձեռղ, —կարող, հունցող-թխող, յեփող, —թափող,  
մի խոսքով՝ հուրի-հրեղեն, մատները վոսկի:

Ես գովասանքը գնում մի յերիտասարդ վաճառա-  
կանի ականջն ե ընկնում: Ես յերիտասարդ վաճառա-  
կանն ասում ե՝ իմ ուզածն ել հենց սա յե, վոր կա:  
Գլխապատռ գալիս ե Անբան Հուռնին ուզում ե, հետը  
պսակվում, տանում իրենց տունը: Մի քանի ժամա-  
նակից յետը մի տասը-քսան բեռ բամբակ ե առնում  
տալիս կնկանը, թե՝ յես գնում եմ հեռու տեղեր առու-  
տուրի, դու յել ես բամբակը գզի, մանի, գամ տանեմ  
ծախեմ, հարստանանք:

Անբան Հուռնին ե, իրեն համար մաստակ ծամելով  
ման ե գալիս: Մի որ ել գետի ափովն անց կենալիս  
լսում ե, վոր գորտերը կոկում են.

— Փեփե՛լ. . . կեկե՛լ. . . Փեփե՛լ. . . կեկե՛լ. . .

— Վո՛ւյ, աղչի Փեփել, կեկել, — ձեն ե տալիս ան-  
բան Հուռնին, վոր բամբակը բերեմ ձեզ տամ՝ կը-  
դզե՞ք. . .

— Բե՛ր, բե՛ր, բե՛ր. . .

Անբան Հուռնին ուրախանում ե: Գնում ե բամբակը  
կըռում բերում, ածում գետը:

— Դե գզեցեք, մանեցեք: Մի քանի որից յետը կը-  
դամ մանածը կտանեմ, վոր ծախենք:

Գնում ե մի քանի որից յետ ե գալի:

Գորտերն ելի կոկում են.

— Փեփե՛լ-կեկե՛լ. . . Փեփե՛լ-կեկե՛լ. . .

— Ախչի Փե՛րփել, կե՛կել, դե մանածը բերեք:

Գորտերը շարունակում են կոկուալ, իսկ մանածը  
չեն բերում:  
Հուռին մին ել վոր նայում ե, աշքովն ընկնում ե  
գետի ափերին ու քարերին փաթաթված կանաչ մուռը:  
— Վո՛ւյ, — ասում ե, — քոռանամ յես, տե՛ս, համ  
գզել ու մանել են, համ խալիչա յեն դործել իրենց  
համար:

Զեռքը ճակատին ե դնում ձեն տալիս:  
— Դե վոր խալիչա յեք գործել, մեր բամբակի  
փողը բերեք: — Ձեն ե տալի ու վոտը փոխում ե, մտնում  
չուրը: Հանկարծ վոտը առնում ե մի կոչտ բանի:  
Հանում ե տեսնում մի կտոր վոսկի: Փեփելին ու կե-  
կելին շնորհակալություն ե անում, վոսկու կտորը փեշը  
դնում, գալիս տուն: Մարդն ել առուտուրի տեղիցն ե  
գալիս: Գալիս ե տեսնում՝ իրենց թարեքին մի մեծ  
վոսկու կտոր:

— Այ կնիկ, ես ի՞նչ վոսկի յե:

Թե՝ բա չես ասիլ բամբակը Փեփելի ու կեկելի վրա  
ծախեցի. բամբակի փողն ե:

Մարդը վո՞նց ե ուրախանում, ենպես ել դուք  
ուրախանաք: Զոքանչին հրավիրում ե, ընծաներ ե  
տալի, գովում ե, շնորհակալություն ե անում, վոր  
եսպես խելոք, շնորհքով, աշխատասեր աղջիկ ե մեծաց-  
րել: Փեփ ե սարքում. նստում են քեֆի:

Զոքանչը խորամանկ կին ե լինում: Իմանում ե,  
թե բանը ինչպես ե պատահել. վախենում ե փեսեն ել  
աղջկանը գործ հանձնի, ու գաղտնիքը բացվի: Փեփի  
լավ ժամանակը մի բգեղ ե ներս մտնում ու բըռուացնե-  
լով պտտվում սենյակում: Ես զոքանչը վեր ե կենում  
դլուխ ե տալի բգեղին: Ասում ե.

— Բարով յեկար, մորքուր ջան, վոնց ես. վորտեղ  
ես, եսքան ժամանակ չես յերեսում. . . Ախը քեզ ո՞վ եր  
ասում եղքան բան անես, վոր եղ որն ընկնես. . .

Փեսեն մնում ե զարմացած: Ասում ե.

— Այ մեր, խելադարվեցի՞ր, քեզ ի՞նչ պատահեց.  
Եղ բգեղին եղ ի՞նչ ես ասում՝ մորքուրս վորն ե. . .

Զոքանչը թե. . . Այ վորդի, քեզանից ի՞նչ թագցնեմ,

դու իմ վորո՞ին ես։ Զես ասիլ ես բզեզն իմ մորքուրն ե։ Խեղճը շատ աշխատասեր կնիկ եր։ Ամբողջ որն աշխատում եր, շատ աշխատելուց կուչ յեկավ, պստիկացավ, ենքան պստիկացավ, վոր դառավ բզեզ։ Մեր ցեղն եսպես ե։ Շատ աշխատասեր ենք։

Բայց աշխատելուց պիստիկանում, բզեզ են դառնում։

Ես վոր փեսեն լսում ե, վախից քիչ ե մնում պռոշը ճաքի. են ե լինում վոր են, արգելում ե Հունին ձեռն ել բանի չտա, վոր մորքուրի նման բզեզ դառնա։

## ԳԱԲՈ ԲԻԶՈՒ ՇԵՐԱՄԱՊԱԼՈՒԹՅՈՒՆԸ

Յես ու Գաբո բիձեն անցնում եյինք Լոռու ձորով։

— Հե՛յ, տիրացու, — ձայն տվակ նա։

— Համմե։

— Հրամանքդ շատ։ Յետ տեսնում եմ, վոր ես մեր նոր ուսում առածները շատ աշխարհից դուրս մարդիկ են, դու սրան ի՞նչ կասես։

— Ինչո՞ւ, Գաբո բիձա։

— Նրա համար, վոր հենց գիտեն՝ ամեն բան իրենք են հասկանում։ Իրենցից առաջ ել վոչ մարդիկ են յեղել, վոչ բան են հասկացել։ Մին ել կտեսնես բոնեցին ու գլխիդ գելի ավետարան կարդացին — հա՛ ես ճանձ պահի՛ր, ես աբրեշումի ճիճու պահի՛ր, եսպես մածուն շինի՛ր, եսպես ցանի՛ր, եսպես հնձի՛ր։

Տո՛, հեր որհնած, մի առաջ հարցրո՛ւ, տես՝ ելք բաները դրանք ել միտք են արել թե չե, նրանից յետը՝ թեկուզ ուշունց տուր։

— Յետո մի՞տք եք արել վոր, Գաբո բիձա։

— Ախպեր, այ, յես հիմի որինակի համար՝ մինն ասեմ, դու տես՝ մենք ել հացակեր մարդիկ ենք, բան ենք հասկանում թե՞ չե։ Մի աշունք մեր Դավոն գնաց քաղաքը խոզ ծախելու։ Մի ճանանչ մարդ աբրեշումի ճիճի՛ սերմ եր տվել թե՝ տարեք ձեր տեղը առաջ բերեք։ Ճամբա պահեցինք մինչե գարունքը բաց եղավ։

Գարունքը վոր բաց ելավ, վոնց վոր խրատ եր տվել՝ ես ճիճվի սերմը բերինք մեր խիզանի ծոցում դրինք, վոր տաքանան, դուրս գան։ Դուրս յեկան ասեղի ծերի չափ մանր սև զաղեր։ Տիրացո՛ւ։

— Համմե։

— Եղ ձեր ուսումնականները թե գիտեն — արբեշումի ճիճուն ի՞նչ կուտի։

— Թթան տերեվ։

— Ապրես, դրուստ ա։ Գնացի ձորիցը մի շալակ թթան տերև բերի, կապեցի մենծ տան ամբարի վոտիցն ու ճիճուն վրեն ածի։ Ինչքան մարդ եկավ նայելու, վոչ վոքի տուն չը թողինք՝ վոր աչքով չտան, ասինք՝ թող մի տեսնենք ինչ ա դուրս գալի։ Այ տղա, եղ անտեր ճիճուները մի քանի որ կացան ու կոտորվեցին։ Հիմի թե ասենք նրանից եր, վոր գոմշի ձագը շատ եր մոտ կապած, վոտնատակ եր տալիս, թէ նրանից եր, վոր հավերը տուն եյին թափում՝ կտցահարում։ դե վո՞նց անենք։ Հո չեյինք կարող հավերը կոտորել կամ ձագն սպանել։ Թէ ասենք անձրեիցն եր, վոր յերդիկովը ներս եր թափվում, մին ել մարդ միտք ա անում, թե բա քաղաքումն անձրե չի գալի՞… Մի խոսքով՝ բան դլուխ չեկավ։ Տեսանք, վոր մեր յերկրումը աբրեշումի ճիճուն ածում չի, բան չի դառնում։ Դե, զարմանալու ի՞նչ կա վոր։ Ենպես յերկիր կա՝ հավք չի ապրում, ենպես յերկիր կա՝ ցորեն չի դուս գալի։ ամեն աշխարհը մի տեսակ բնություն ունի. բայց ես մեր նոր ուսում առածները եսքանն ել չեն հասկանում։

## ՆԵՍՈՅԻ ՔԱՐԱԲԱՂՆԻԱԾ

Կիրակոսը մըսել եր, անկողին եր ընկել, տանջվում եր տաքության մեջ։ Հարեվանները հիվանդի շուրջը հավաքված ողեն լիքը զրույց եյին անում, չիբուխ քաշում։

— Տղե՛ք, սա վոր քրտնի վոչ, բան չի դառնալ,

Եկեք սրան մի քարաբաղնիս անենք,—ծխի միջից առաջարկեց Նեսո բիձեն:

— Հա, եղ խելքս կտրեց,— հավանություն տվեց մի ուրիշը:

Դրան ել ուրիշ ճար չկա,— ձեն տվին ես ու են կողմից:

— Կիրակո՞ս...

— Հը՛:

— Ասում ենք քարաբաղնիս անենք, ի՞նչ ես ասում:

— Վախենում եմ... չդիմանամ...

— Տո, կդիմանաս, յերեխա հո չե՛ս:

— Դե... դուք գիտեք... ձե՛զ... մատաղ:

— Աղջի, պղինձը ջուր լցրեք բերեք, մի փեշ ել քար բերեք կրակն ածենք տաքանան:

Պղինձը դրին կրակին, քարեն ածին կրակի մեջ ու նստուեցին: Նեսո բիձեն սկսեց պատմել, թե քանի հոգի յեն ազատվել քարաբաղնիսով. Մատնանց Դանելը, Մաթոսանց Մինասը, Ծատուրանց Ստեփանը, Մաշկուվորանց Միկոն—մինչև վոր ջուրն յեփ յեկավ, քարերն ել կարմրեցին:

— Դե ժամանակն ա, վե՛ր կացեք:

— Տղեք, վախում եմ...— կանչեց հիվանդը:

— Դու սո՛ւս կաց: Աղջի, մի յերկու հաստ լեհեր բերեք, մի չորս ու հինգ ուժով տղեք ել եկեք եստեղ:

Շորերով փաթաթված յեռման ջրով լիքը պղինձն ու հիվանդին դրին իրար հետ, կարմրած քարերը լցրին ջրի մեջ. քարերը թշացին, ամպի նման գոլորշին սկսեց քարձրանալ, շտապով վերմակները ծածկեցին ու չորս կողմից վրեն նստուեցին:

— Վա՛յ, խեղդվեցի՛,— խուլ գոռում եր հիվանդը:

— Խեղդվիլ չես... տղեք պինդ նստեցեք: Գլուխն ու վոտները ամուր պահեցեք:

Հիվանդն աղաղակում եր, որհասական ջանքեր եր անում շարժվելու, բայց հինգ-վեց աժդահա տղամարդ վրեն նստած չեյին թողնում:

— Ո՞ւր ես գնում,— կանչում եյին ես ու են կողմից, վերեից սեղմում ու հրհում:

— Հիմի թե չքրտնի՛:

Ու Նեսո բիձեն, հիվանդի վրեն նստած, չիրուխը բերանին շարունակում եր իր պատմությունը:

— Մի տարի ես մեր Արգարն ել եսպես մրսել եր: Պանթափու ծաղիկ բերին չայ շինեցին խմացրին, պղաշող բերին, ջուր արին, տվին իրան, քացախ քսեցին, բան չի դառավ:

Ասի տղեք, բերեք յես դրան մի քարաբաղնիս անեմ: Թե՛ դե դու գիտես: Բերի մի թեժ կրակ արի, Գարան տատի պոռունկը կոտրած պղինձը ջուր լցրի վրեն դրի, քար հավաքեցի ածի չեղջը: Զուրն յեփ եկավ, քարը կարմրեց: Մա թե՛ վախում եմ: Ախր նա ել սրա նման մի լեղապատառ ոքմին ա:

— Աղա, ընչի՞ յես ասում, Արգարը հո սրտոտ ժարդ ա:

— Վա՛յ ե՛, նրա սրտոտը վո՞րն ա: Մի աշունք յես մի արջի բուն դտա: Եկա ասի Արգար արջի բուն եմ գտել, արի զնանք արջին բնիցը հանենք: Գնացինք: Յես մի ձող վեր կալա ես արջի բունը խըրթխըրթորեցի: Մին ել հանկարծ են անտեր արջը դուրս յեկավ ու ինձ կալավ: Արգար, քոմագ հա քոմագ: Ո՞վ կտա Արգար—մին ել տեսնեմ հրեն փախած զնում ա: Արջի ձեռիցը մի կերպով պղծա եկա տուն: Ասում եմ, ադա, դու ես ի՞նչ արիր: Թե՛ եկա տուն, վոր թվանք բերեմ: Սուտ: Վախից փախավ:

— Են եյի ասում— հիմի սա կանգնել ա, թե Նեսո ջան վախենում եմ, ինձ քարաբաղնիս մի՛ անիլ:

Ականջ չդրինք, բերինք կեծացած քարերը յեփման ջուրը լցրինք ու հենց ենպես բուղը վեր ըլելով սրա հետ կոխեցինք տեղի տակը:

— Վա՛յ, մեռա հա, մեռա: Լսողն ո՞վ ա: Վրեն նստուեցինք: Յես եմ, ես մեր Ղուկասն ա, Փիլոն ա, Գարոն ա, Արութն ա: Հիմի սա տակիցը գոռում ա, վո՞նց ա գոռում... Ենքան գոռաց մինչեւ դինջացավ: Բաց արինք, տեսանք ջուր ա կարել: Են եր ու են, լավացավ տեղիցը վեր կանգնեց վողջ առողջ մարդ:

Նեսո բիձու պատմությունը վոր վերջացավ, վեր

կացան վերմակը յետ քաշեցին; Գոլորշին ողեն  
բռնեց: Բայց կիրակոսը...

— Կիրակոս:

Ժաժ չի գալի:

— Կիրակոս...

Պատասխան չի տալիս:

— Կիրակոս—ձեն տվին, շարժեցին, քաշքշեցին,  
կիրակոս չկա:

— Ա'յ տղա, ես վո՞նց ելավ,—մոլորված արտասա-  
նեց Նեսոն: Մյուսները լուռ եյին:

— Վա՛յ, տունս քանդվե՛ց... Ծղրտաց կիրակոսի  
կինը: Իրար հրաբելով տղեքը դուրս եկան կտուրը: Ու  
մինչեռ ներքեւ կիրակոսի կինը սուգ եր անում, կտերը  
արելում նստոտած տղեքը պատմում եյին, թե քանի  
քանի հոգի յեն խեղդվել քարաբաղնիսից. Հանրսանց  
Հարոնը, Մելքոնանց Վանեսը, Հախվերդոնց Աղեն,  
Շիմալանց Շամիրը... վո՞ր մինն ասես:

— Տո՛ դե ճակատի գիր ա ելի, հո նրան ել Նեսոն  
չի խեղդել:

Նեսոն լուռ, գլուխը կախ արած լսում եր ու չի-  
բուխ եր քաշում:

## ՏԵՐՆ ՈՒ ԾԱՌԱՆ

Աստված բարի տա ձեզ ել, յերկու ախալորն ել:  
Լինում են չեն լինում յերկու աղքատ ախալեր են լինում:  
Մտածում են ինչ անեն, վոնց անեն, վոր իրենց տունը  
պահեն: Վճռում են փոքրը տանը մնա, մեծը զնա մի  
ունեկորի ծառա մտնի, ոռճիկ ստանա ղրկի տուն:

Եսպես ել մեծը վեր ե կենում զնում մի հարուստի  
մոտ ծառա մտնում:

Ժամանակ նշանակում են մինչեւ մին ել դարնան  
կըկի ձեն ածելը: Ես հարուստը մի չլսված պայման ե  
զնում ծառային: Ասում ե «մինչեւ են ժամանակը թե  
դու բարկանաս—դու հազար մանեթի տուղանք տառ  
ինձ, թե յես բարկանամ— յես տամ»:

— Յես վոր հազար մանեթ չունեմ վո՞րտեղից  
տամ, — ասում ե ծառան:

— Բան չկա, փոխարենն ինձ տասը տարի ձրէ  
կծառայես:

Տղեն մին վախենում ե ես տարորինակ պայմանից,  
մին ել մտածում ե, թե ինչ պետք ե պատահի: Ինչ  
ուզում են անեն, յես եմ ու չեմ բարկանալ, պրծանք  
գնաց: Իսկ թե իրենք կբարկանան, թող իրենք ել տու-  
ժեն իրենց դրած պայմանով:

Ասում ե լավ. համաձայնում ե:

Պայմանը կապում են ու մտնում ե ծառայության:

Մյուս որը տերը վեր ե կացնում ծառային դրկում  
ե արտը հնձելու:

— Գնա, ասում ե, քանի լուս-լուս ե հնձի, վոր  
մութն ընկնի կգաս:

— Ծառան զնում ե ամբողջ որը հնձում, իրիկումը  
հոգնած գալիս ե տուն: Տերը հարցնում ե.

— Եղ ո՞ւր յեկար:

— Դե արել մեր մտավ յես ել յեկա:

— Զե, եղակես չի: Յես քեզ ասել եմ՝ քանի լուս ե  
պետք ե հնձես: Արել մեր մտավ, բայց տես նրա ախ-  
պեր լուսնյակը դուրս յեկավ: Սա ինչ պակաս ե լուս  
տալի...

— Եղ վո՞նց կլինի... զարմանում ե ծառան:

— Հը, դու արդեն բարկանո՞ւմ ես— հարցնում ե  
տերը:

— Զե, չեմ բարկանում... յես միայն ասում եյի  
հոգնած եմ... Մի քիչ հանգստանամ... կզկում ե վա-  
խեցած ծառան ու զնում ե նորից հնձելու:

Հնձում ե, հնձում, մինչեւ լուսնյակը մեր ե մըտ-  
նում: Բայց լուսնյակը մեր ե մտնում թե չե, դարձյալ  
արեգակն ե դուրս գալի: Ծառան ուժապառ արտում  
վեր ե ընկնում:

— Վա՛յ, քու արտն ել հարամ ըլի, քու հացն ել,  
քու տված ոռճիկն ել... սկսում ե հայհոյել հուսահատ-  
ված:

— Հը, դու բարկանո՞ւմ ես,—կանգնում ե գլխին  
հարուստը: Յերբ վոր բարկանում ես, մեր պայմանը

պայման ե: Ել չասես թե քեզ հետ առանց իրավունքի  
վարչեցին:

Ու պայմանի ուժով ստիպում ե, ծառան կամ հա-  
ղար մանեթ տուգանք տա, կամ տասը տարի ձրի ծա-  
ռայի:

Ծառան մնում ե կրակի մեջ: Հազար մանեթ չու-  
ներ, թե տար հոդին ազատ աներ, տասը տարի ել ես  
տեսակ մարդու ծառայելն անկարելի բան եր: Միտք  
ե անում, միտք, վերջը հազար մանեթի պարտամուր-  
հակ ե տալի հարուստին, դառն ու դատարկ վերադառ-  
նում տուն:

— Հը՛, ի՞նչ արիր, — հարցնում ե փոքր ախպերը:  
Ու մեծ ախպերը նստում ե, գլուխն եկածը պատմում,  
ինչպես վոր պատահել եր:

— Բան չկա, — ասում ե փոքրը, դարդ մի անի.  
Դու տանը կաց հիմի յել յես գնամ:

Վեր ե կենում հիմի ել փոքր ախպերն ե գնում ծա-  
ռա մտնում ել նույն հարուստի մոտ:

Հարուստը դարձյալ ժամանակը վորոշում ե մինչեւ  
դարնան կըկի ձեն ածելը, ու պայման ե գնում, վոր  
յեթե ծառան բարկանա, հազար մանեթ տուգանք տա,  
կամ տասը տարի ձրի ծառայի, թե ինքը բարկանա,  
հազար մանեթ տա ու են որից ել ծառան ազատ ե:

— Զե՛, եղ քիչ ե, — հակառակում ե տղեն: Թե դու  
բարկանաս, դու ինձ յերկու հազար մանեթ տաս, թե  
յես բարկանամ, յես քեզ յերկու հազար մանեթ տամ  
կամ քան տարի ձրի ծառայեմ:

— Լա՛վ, — ուրախանում ե հարուստը: Պայման կա-  
պում են, ու այժմ ել փոքր ախպերն ե մտնում ծառա-  
յության:

Առավոտը լուսանում ե, ես ծառան վեր չի կենում  
տեղիցը: Տերը դուրս ե գնում, տուն ե գալիս, ես ծա-  
ռան դեռ քնած ե:

— Ա՛յ տղա զե վեր կաց ե, որը ճաշ դառավ:

— Հը՛, բարկանում ես դու... գլուխը վեր ե քա-  
շում ծառան:

— Զե՛, չեմ բարկանում, — վախեցած պատասխա-

նում ե տերը. միայն ասում եմ՝ պետք ե արտը գնանք  
հնձելու:

— Հա, վոր եղ ես ասում վոչինչ, կգնանք, ինչ  
ես վոազու՞:

Վերջապես ծառան վեր ե կենում, սկսում ե տրեխ-  
ները հագնել: Տերը դուրս ե գնում, ներս ե գալիս, սա-  
դեռ տրեխները հագնում ե:

— Այ տղա, զե շուտ արա, հագի յե...

— Հը՛, հո չե՞ս բարկանում:

— Զե՛, ո՞վ ե բարկանում, յես միայն ուզում եյի  
ասել՝ ուշանում ենք...

— Հա՛, եղ ուրիշ բան ե. թե չե՝ պայմանը պայ-  
ման ե:

Մինչև ծառան տրեխները հագնում ե, մինչև աբոն  
են գնում, ճաշ ե դառնում:

— Ել ինչ հնձելու ժամանակ ե, — ասում ե ծա-  
ռան, — տեսնում ես ամենքն ել ճաշում են, մենք ել մեր  
ճաշն ուտենք՝ հետո:

Նստում են ճաշն ուտում: Ճաշից հետո ել ասում  
ե՝ «մշակ մարդիկ ենք, պետք ե մի քիչքնենք, հանգը-  
տանանք, թե չե՞»: Գլուխը կոխում ե խոտերի մեջն  
ու գնում մինչև իրիկուն:

— Տո՛, վեր կաց ե՛, մթնեց ե՛, ուրիշները հնձե-  
ցին, մեր արտը մնաց... Վա՛յ քու դեսը զրկողի վիզը  
կոտրի, վա՛յ քու կերածն ել հարամ ըլի, քու արածն  
ել... Ես ինչ կրակի մեջ ընկա... — սկսում ե գոռգոռալ  
հուսահատված տերը:

— Հը՛, չինի՞ թե բարկանում ես, — գլուխը վեր  
ե քաշում ծառան:

— Զե՛, ո՞վ ե բարկանում, յես են եյի ասում թե՝  
մթնել ե, տուն գնալու ժամանակն ա:

— Հա՛, եղ ուրիշ բան ե, գնանք, թե չե մեր  
պայմանը գիտես, վա՛յ նրա մեղքը, ով բարկացավ:

Գալիս են տուն: Տեսնում են հյուր ե յեկել:

Ծառային զրկում են թե՝ գնա վչխար մորթի:

— Վո՞րը:

— Վորը կպատահի:

Ծառան գնում ե: Մի քիչ հետո լուր են բերում  
Հարուստին, թե՝ հասի, վոր քու ծառան ամբողջ հոտդ  
կոտորեց: Ես հարուստը վազում ե, տեսնում ե՝ ճիշտ  
վոր, ինչ վոչխար ունի, բոլորը ծառան մորթել ե: Գըլ-  
խին տալիս ե, գոռում:

— Ես ի՞նչ ես արել, ա'յ անաստված, քու տունը  
քանդվի, ինչ իմ տունը քանդեցիր . . .

— Դու ասիր՝ վոր վոչխարը պատահի մորթի, յես  
ել յեկա, բոլորը պատահեցին բոլորը մորթեցի—ուրիշ  
ավել պակաս ի՞նչ եմ արել, —հանդիստ պատասխանում  
է ծառան, բայց կարծեմ դու բարկանում ես...

— ԶԵ՛, բարկանում չեմ, միայն ափսոսս գալիս ե, վոր եսքան ապրանք փչացալ...

— Լա՛վ, վոր բարկանում չես, Ե՛ւ կծառայեմ:

Հարուստը մտածում ե՝ ինչ անի, վոնց անի, վոր  
և ծառայիցն ազատվի։ Պայման ե կապել մինչև մին  
ել գարնան կկվի ձեն ածելը, այնինչ դեռ նոր են մտել  
ձմեռը, դեռ վո՞րտեղ են գարունն ու կկուն։

Միտք ե անում միտք, մի հար ե մտածում։ Կնոջը  
տանում ե անտառում մի ծառի վեր հանում ու պատ-  
վիրում, վոր «կուկու» կանչի։ Ինքը գալիս ե ծառային  
տանում թե՝ արի գնանք անտառը վորսի։ Հենց ան-  
տառն են մտնում թե չե, կինը ծառի վրայից կանչում  
ե, —«կուկու, կուկու»...

— ԲՀՐ՝, աչքդ լույս, —ասում ե ծառային տերը.  
Կկուն կանչեց, ժամանակդ լրացավ...

Տղեն գլխի յեւ ընկնում տիրոջ խորամանկությունը:  
— Զե՞ւ, ասում ե, ով է լսել, վոր տարու ես յեղա-  
նակին, ձմեռվա կեսին, կկուն ձեն ածի, վոր սա ձեն  
ե ածում: Յես պետք ե կըկվին սպանեմ, սա ինչ կկու-  
յե...

Ասում ե ու հրացանը քաշում դեպի ծառը:

Տերը գոռալով ընկնում է առաջը.

— Վայ չզարկես, աստծու սիրուն... ու լինի քու

պատահելու որը, ես ինչ փորձանք եր, վոր յես ընկած ենք...

— ՀԵ՞, չինի՞ թե բարկանում ես . . .

— Հա՛, ախպեր, հերիք եր. արի՝ ինչ տուգանք  
տալու յեմ տամ, քեզանից ազատվեմ, իմ դրած պայ-  
մանն ե—յես ել պետք ե տուժեմ։ Հիմի նոր եմ հասկա-  
նում են հին խոռքը՝ թէ «մարդ ինչ անի, իրեն կանի»։

Եսպես հարուստը խելոքանում ե, իսկ փոքր ախ-  
պերը մեծ ախպոր տված պարտքի թուղթը պատռում  
ե, հազար մանեթ տուղանքն ել առնում ու վերադառ-  
նում տուն:

365-8362



Պատ . խմբագիր՝ Ա . Գավլյան

Տեխ . խմբագիր՝ Լ . Ոհանյան

Սրբագրիչ՝ Ա . Արզականյան

Հքառ . 4043 , դւակ . լիազոր Կ—4526 , պատվ . 420 , տիրաժ 5000

Հանձնված է արտադրության 10 մարտի , 1937 թ .

Ստորագրված է տպելու 20 մայիսի , 1937 թ .

Թուղթ 62×94 տպագրական  $1\frac{1}{8}$  մամուլ . 1 մամուլում 33280 նիշ .

Հեղինակային  $\frac{3}{4}$  մամուլ .

---

Պետհատի տպարան , Յերևան , Լենինի 65



295

9914

ԳԻՒԾ 25 Կ.

1  
2

Օ. Վ. ԹՈՄԱՆՅԱ  
ՐԱԾԿԱՅՑ

Դաստիարակություն Հայաստանի ԽՍՀ, Երևան, 1987 թ.